ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԽԱԱԱ/669

«25» 02 2021թ.

«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Փոթոյանին
Երևան, Աբովյան փ./23
էլ. հասցեն՝ aida.trade@yandex.ru:
ՀՎՀՀ 02811842

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/17-4 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 02.06.2020թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել՝ *5500 հատ Ջերմաչափ բժշկական*, 2-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում՝ *80 հատ Ռենտգեն ժապավեն 18x24 N100*, 4-րդ եռամսյակի ընթացքում՝ *800 լրակազմ Տոնոմետր ֆոնէնդոսկոպով*, որոնց մասով Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Համաձայնագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել *119,095 (հարյուր տասնինը հազար իննսունհինգ) ՀՀ դրամ*՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև տուժանք՝ *448,720 (չորս հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ*, որպես պայմանագրի կատարման ապահովում Պայմանագրի գումարի 10%-ը՝ 900005000758 հաշվեհամարին:

Ն. ՅՈԼՉՅԱՆ